



ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺԻՇԿԻՐ

«Պարոն բժիշկ, հաճեցէք ձեր անմիջական խնամքները շնորհել մեր հիւանդին, մինչեւ մեր ընտանեկան բժիշկին հասնիլը»: Ամէն անգամ որ պատահած եմ այսօրինակ դիմումի և լսած՝ յաջորդող ազգարարութիւնը, երբէք տհաճութիւն չեմ զգացած, այլ ընդհակառակն, մասնաւոր յարգանքով վերաբերուած եմ այդ ընտանիքին հանդէպ և մտովի ըսած եմ. — Ահա իմաստուն և բախտաւոր ընտանիք մը, որ դիտէ գնահատել անական առողջութիւնը և անոր հսկողութիւնն ու խնամքը կը վստահի նոյնքան բախտաւոր բժիշկի մը: Բախտաւոր կ'անուանեմ այն բժիշկը, որովհետեւ ամէն բժիշկի վիճակուած չէ նոյն վստահութիւնը վայելել միշտ՝ հակառակ իր մատուցած անձնուէր ծառայութիւններուն:

Տարրական իմաստութիւնը և միանգամայն իր շահը կը պահանջեն ընտանիքի մը պետէն, շրջահայեաց որոշումով մը իր ընտրութիւնն ընել և տանը առողջապահական հսկողութիւնը վստահիլ պարտաճանաչ բժիշկի մը: Այն ատեն իսկ կ'ազատի յարակից հոգերէ և բժիշկը՝ անոր տեղ, կըստանձնէ ամէն պատասխանատուութիւն:

Ո՛րչափ կը մոլորին եւ կը առժեհն նիւթապէս և առողջապէս անոնք որ դռնէ դուռ կը շրջին, «այս չեղաւ, միւսին դիմենք» ըսելով: Յաճախ կը վատնեն ժամանակ որ թանկագին է և թերեւս վճռական՝ հիւանդութեան և՛ հետեւանքներուն և՛ վերջաւորութեան համար: Այս պարագային բժիշկներ կը քննեն և կը փորձեն դարմանել հիւանդը, բայց ոչ մին կը հետեւի հիւանդութեան շրջանին

և յաջորդող փուլերուն: Այսպէս հիւանդութիւնը կրնայ յառաջդիմել և ծաւալիլ, և հիւանդը կը տուժէ:

Հայրե՛ր ու մայրե՛ր, ջանացէ՛ք լաւագոյն ընտրութիւնն ընել և հաստատուն կեցէ՛ք ձեր ընտրութեան վրայ: Զեր ընտրած բժիշկին վստահած կ'ըլլաք զսեփ առաքելութիւն մը, զոր իր կարգին պիտի գործադրէ խղճմտանքով և անձնուիրութեամբ: Այդ օրէն սկսեալ ձեր ընտրեալը օտարական մը չէ այլևս, ձեր ընտանիքին անդամն է: Վազնջական դարերու մէջ Հոռոմայեցիները ունէին առանին աստուածներ զորս Թիրալի կ'անուանէին: Ասոնց պաշտպանութեան յանձնուած էին տունը և տնեցիները՝ պահպանելու համար զանոնք ամէն շար պատահարներէ և հիւանդութիւններէ: Ընտանեկան բժիշկը այսօր ձեր տան Թիրալին է, իր բովանդակ դիտութիւնը ձեզ 'ի սպաս կը դնէ, կը հսկէ ձեր տան և տնեցիներուն վրայ, կուտայ օգտակար խորհուրդներ, կը կիրարկէ դարմանումներ. ան պաշտպանն է ընտանիքին՝ իր փորձառական պաշարով և գիտական գէնքերով, ընդդէմ անոր ատողութեան սպառնացող երեւելի և աներեւոյթ թշնամիներուն. ան ձեր օճախին վրայ հսկող պահապան հրեշտակն է:

Ինքն է որ լոյս աշխարհ կ'առաջնորդէ ձեր զաւակները, կը հսկէ անոնց փափուկ և դիւրբարկ մարմնոյն վրայ և հեռու կը վանէ անոնցմէ, ատողապահիկ զգուշութիւններով, ամէն ախտածին պատճառներ: Մտերիմ խորհրդականն է մօրը, երբ կը հասնի մանուկը գօրացնելու և կրթելու ժամը, և, աւելի ուշ, ինքն է որ կ'առաջնորդէ ծնողքը իրենց զաւակին համար ընտրելու լաւագոյն ասպարէզը գործնական կեանքի մէջ, հաւածայն իր կազմուածքին և ընդոծին տրամադրութեան, և հուսկ ուրեմն ամուսնութեան փափուկ հարցին մէջ, որմէ կախում ունի թէ իրենց զաւակին և թէ բովանդակ ընտանիքին ապագայ և տևական բարօրութիւնը:

Հրաւէրի չ'սպասեր այցելելու համար, կը մտնէ կ'ելլէ տան մէջ առանց ձեւակերպութեան. հոն եւ կամ անկէ հեռու իր աշխատանոցին մէջ՝ այդ տնեցիները իր մտածութիւններուն առարկայ են. ամէն օր մաս առ մաս կ'ուսումնասիրէ իր խնամքին յանձնուած անձերուն՝ մեծին ու փոքրին կազմուածքները, կը տեղաւորէ իր յիշողութեան մէջ ամէն մէկուն տկար կողմերը, կը ճանչնայ ամէն գործարաններուն վիճակը, ինչպէս դպրոցականը կը ճանչնայ աշխարհացոյց քարտէսը: Հիւանդութեան մը պարագային մութի եւ անորոշութեան մէջ չի խարխաբեր, ծանօթ է իրեն անոնց անցեալը եւ ներկան, գիտէ թէ ո՞ր գործարանը արթուն հսկողութեան և զօրացումի պէտք ունի, գիտէ թէ թշնամին ո՛ւր կրնայ ազդուապէս հարուածել, դէպի հոն կ'ուղղէ իր բովանդակ ուշադրութիւնը և կը կիրարկէ բժշկական գիտութեան իր ձեռքին տակ տրամադրած գէն-

քերքը, նման զօրավարի մը որուն յանձնուած է երկրին պաշտպանութիւնը, որ կը ճանչնայ իր երկրին հարուածելի մասերը և հոն կը թափէ իր ուղղակիան ուժը: Եւ որովհետեւ զիտակ է իր ստանձնած պատասխանատուութեան ծանրութեանը, ի հարկին դժուարին պարագաներու մէջ ինքն է որ կ'որոշէ և կը փնտռէ կարողագոյն եւ վստահելի արուեստակցի մը խորհրդակցութիւնը, չարիքը շուտով ջնջելու և հիւանդին բուժումը ապահովելու համար:

Այսօր բժշկական գիտութեան սահմանը շատ ընդարձակ է, այնպէս որ ամէնէն բեղմնաւոր միտքն անգամ չի հասնիր ընդգրկել այդ գիտութիւնը իր ներկայ ծաւալին մէջ: Ծնունդ առած են մասնագիտութիւններ, որոնց մէկին կամ միւսին բժիշկներ կը նուիրեն իրենց ուսումը և փորձառական զննութիւնները և այդ ճիւղին մէջ աւելի հմտութիւն ձեռք կը բերեն: Արդ, դարձեալ ընտանեկան բժիշկըն է որ կը մտածէ պատե՛հ ժամուն անոնց գործակցութիւնը խընդրել և զանոնք օգնողործել իր հիւանդներուն համար:

Գիտական բժշկութիւնը ժողովրդականացնելու համար այսօր բազմաթիւ հրատարակութիւններ կան. մարդիկ կը փորձուին անոնց բնզհանուր խորհուրդները իրենց մասնաւոր պարագային պատշաճեցնելով խախտած առողջութիւնը վերահաստատել, և յաճախ կ'իյնան մոլոր ճամբու մէջ. ընտանեկան բժիշկը կը հասնի և կ'ուղղէ մոլորութիւնը:

Օրաթերթերու մէջ անհուն անհամար պատրաստ դեղերու ծանուցումներ կը վխտան և ի՛նչ ոսկեզօծ խոստումներ կ'ընծայեն: Անոնց ընթերցումով մարդ կը հրապուրուի եւ զանոնք գործածել կ'ուզէ, բայց յաճախ աւելի կը վնասուի քան կ'օգտուի: Դարձեալ ընտանեկան բժիշկն է որ կը հասնի ցոյց տալու օգտակարը և վնասակարը:

Ձեր զաւակները չափահաս եղած են. մեծ քաղաքներու մէջ ի՛նչքան դժուար է ծնողքներուն հսկել անոնց արտաքին յարաբերութիւններուն վրայ: Ընտանեկան բժիշկը միայն կրնայ ըլլալ անոնց մտերիմ եւ վստահելի բարեկամը, զգուշացնելու համար զանոնք սայթաքումներէ: Եւ եթէ դժբախտաբար այդ սայթաքումը տեղի ունենայ, ընտանեկան բժիշկին խորազննիչ աչքերը միայն կրնան թափանցել ախուր գաղտնիքին եւ թոյլ չտալ որ իր պաշտպանեալը կեղեքուի նիւթապէս եւ տուժէ Ֆիզիքապէս՝ հիւանդութիւնները չհագործող դարմանատուներու կողմէ, որոնք գի՛նեառներուն չափ բազմաթիւ են մեծ քաղաքներուն մէջ:

Ջանացի համառօտակի ուրուագծել ընտանիքի բժիշկ ունենալու առաւելութիւնները: Ծնողքներուն կը մնայ այս բարեացակամ խորհուրդներէն ղտուել և ըստ այնմ տալ իրենց որոշումները:

(Շամփինսի)

Բժ. Բ. ՈՍԿԻ